ԱՐՇԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

ՊԱՏՄԱՎԵՊԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ[1] ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Աշխատանքում քննարկվում են պատմության դասավանդման ընթացքում պատմավեպերի՝ ինչպես դասապրոցեսին, այնպես էլ արտադասարանական ընթերցանության միջոցով ավագ դպրոցականների մեջ հայրենասիրական զգացմունքների ձևավորման խնդիրները: Մեր կողմից փորձ է կատարվում քննարկել պատմավեպերի անհրաժեշտությունը անձի արժեքային համակարգում կարևոր տեղ զբաղեցնող հայրենասիրության ձևավորման խնդրի իրականացման տեսանկյունից: Աշխատանքում քննարկվում է պատմավեպերի օգտագործման կարևորությունը, ինչպես բուն դասապրոցեսի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության միջոցով: Պատմավեպերի օգտագործումը դեռահասներին կօգնի առավել վառ պատկերացնել ժամանակաշրջանի ոգին, մատչելի դարձնելով դասագրքային նյութի հետագա ընկալումն ու յուրացումը:

Պատմության դասավանդման համատեքստում կարևոր նշանակություն ունի պատմավեպերի օգտագործումը, ինչպես դասապրոցեսում (ուսուցչի բանավոր խոսքի կամ պատումի միջոցով, հատվածների ընթերցանության, օրինակի մեթոդի կիրառում, դաս-բանավեճերի ընթացքում, այս կամ այն ստեղծագործության շուրջ ծավալված քննարկումների և այլն), այնպես էլ դրանից դուրս տնային ընթերցանության միջոցով: Պատմավեպերի հերոսականացված վառ կերպարները իրենց դաստիարակչական ազդեցությունն են թողնում ընթերցողի վրա:

Պատմավեպերի դաստիարակչական ներգործությունը մեծ է հատկապես հայրենասիրական զգացմունքներ առաջացնելու գործում: Հայրենասիրությունը այն սերն է հայրենիքի նկատմամբ, որը ոչ մի դեպքում չի կարելի շփոթել շովինիզմի կամ ազգայնականության հետ: Օսեթական ժողովրդական ասացվածքն ասում է՝ նա ով չի սիրում իր ազգին չի սիրի նաև այլ ազգի[2]:

Այս հարցում խորիմաստ է նաև հանճարեղ Բայրոնի արտահայտած միտքը. «Նա ով չի սիրում իր հայրենիքը չի կարող սիրել ոչինչ»[3]: Ավելին՝ պետք է նշել, որ համաշխարհային հանրության մեջ

1 Հայրենասիրություն՝ պատրիոտիզմ /հունարենից թարգմանաբար հայրենիք/-սոցիալ-քաղաքական և բարոյական սկզբունք է, որն արտահայտում է սեփական հայրենիքի հանդեպ սիրո և անձնական ու խմբային շահերը հայրենիքի շահերին ծառայեցնելու, նրան հավատարիմ ծառայելու ու պաշտպանելու պատրաստակամությամբ: Հայրենասիրության խնդիրը առավել ակտուալ է դառնում ինտեռնացիոնալիզացման, միջպետական, ռեգիոնալ և համամարդկային ինտեգրատիվ, գլոբալիզացման գործընթացների խորացման ու ընդլայնման կապակցությամբ, որոնք հարցականի տակ են դնում պետականության սուվերենության դերն ու նշանակությունը: Հայրենասիրությունը չի կարելի հակադրել ինտերնացիոնալիզմին ու կոսմոպոլիտիզմին: Սեփական ժողովուրդը /էթնոսը/ և երկիրը այլ երկրներին ու ժողովուրդներին հակադրվող հայրենասիրությունը չի կարող լինել իսկական, կոնստրուկտիվ և հեշտությամբ վերափոխվում է նացիոնալիզմի և շովինիզմի: Տես՝ Словарь-справочник по педагогике, автор состовитель Мижериков В.А., под. ред. Пидкасистого П.И., “Творческий центр”, Москва, 2004, стр 264.

2 Кукушин В.С., Болдырева-Вараксина А.В., Педагогика начального образования, изд. “Март”, Ростов на Дону, 2005, стр. 383., /Kukushkin V.S., Boldiryova-Varaksina, Pedagogy of primary education, “March”, Rostov-on-Don, 2005, p. 383/.

3 Иоффе А.Н., Патриотизм и его примеры в истории России, “Преподование Истории в школе”, Научно теоретический и методический журнал, Н. 5-й, 2012, стр., 54.

համահարթեցման կամ ինտեգրացիոն աճող տենդենցները ավելի են բևեռում ուշադրությունը ազգային մշակույթների զարգացման վրա: Հենց բազմաթիվ մշակույթների առկայությունն է հնարավորություն տալիս խոսել բոլոր տեսակի մշակույթներն օրգանապես իրար կապող բազմամշակութային կրթության տեսլականից[1]:

ՀՀ հայոց պատմության պետական կրթական չափորոշիչներով հայոց պատմության դասավանդման գլխավոր նպատակներից է՝ ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ[2]: Ավագ դպրոցականի արժեքային համակարգի չափորոշիչներով, սահմանվում է, որ աշակերտը.

Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին.

Կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք.

Ունենա ազգային ինքնագիտակցություն[3]:

Այսպիսով հայրենասիրությունը կարևորագույն արժեք է անձի ձևավորման գործընթացում, որը նրա՝ որպես հասարակության անդամ, կենսագործունեությունն առավել արդյունավետ և գիտակցված դարձնելու արժեք է: Մեր կարծիքով առանց սեփական ազգի նկատմամբ սիրո և նվիրվածության անձը չի կարող գիտակցել նաև համամարդկային արժեքները և դրանց դերը մարդկության կյանքում:

Անձնային որակների մեջ կարևոր հասկացություն է հայրենասիրությունը, դրանով իսկ հայրենասիրական դաստիարակությունը մեծ կարևորություն է ձեռք բերում ավագ դպրոցականներին՝ որպես հասարակական անձ, քաղաքացի ձևավորելու գործում:

Բազմաթիվ ժողովուրդներ հնագույն ժամանակներից ի վեր իրենց սերունդների մեջ հայրենասիրություն են սերմանել պատմական թեմաներով ստեղծագործությունների (բանավոր ապա նաև գրավոր) միջոցով, որոնք մշտապես աչքի են ընկել իրենց գեղարվեստական բարձր արժեքով, վառ նկարագրություններով և պարունակել՝ գեղագիտական մեծ արժեք: Դրանք նախապես սերունդներին են փոխանցվել բանավոր խոսքի ապա նաև գրավոր խոսքի միջոցով: Այդպիսի ստեղծագործություններ են ժողովրդական երգերը, զրույցները, վիպական ավանդություններն ու առասպելները:

Ժամանակի ընթացքում փոխվել է պատմական թեմաներով ստեղծագործությունների ժանրը և ստացել ավելի ծավալուն բնույթ: Թեև գրականության պատմության մեջ ժողովրդի պատմական անցյալի գեղարվեստական արտացոլումն սկսվել է շատ վաղուց, սակայն պատմավեպի ժանրը ընդամենը երեք դարյա պատմություն ունի, և դասական իմաստով պատմավեպը հիմնադրվել է շոտլանդացի վիպասան Վալտեր Սկոտի[4] կողմից[5]:

---

1 Кукушин В.С., Болдырева-Вараксина А.В., стр. 379-380.

2 Հայոց պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, ՀՀ կրթության և գիտության նախարարություն կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2009, էջ 8:

3 Հայոց պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր.., էջ 33:

4 Վալտեր Սքոթ ծնվել է 1771թ. օգոստոսի 15-ին Էդինբուրգում, անգլիացի գրող, բանաստեղծ, ծագումով Շոտլանդիայից: Հայտնի է գլխավորապես իր պատմավեպերով, որոնցից «Քվենտին Դորվարդը» (Quentin Durward (1823)) և «Այվենհոն» (Ivanhoe (1819)) <<Ռոբ-Ռոյ>> /Rob-Roy/: Սքոթի առաջին ինքնատիպ ստեղծագործությունը «Հովհաննու իրիկունը» (1800 թվական) ռոմանտիկական բալլադն է: 1800 թվականից զբաղվել է շոտլանդական ժողովրդական բալլադներ հավաքելով («Շոտլանդական սահմանի երգերը»): Ստեղծելով պատմավեպը՝ Սքոթը տվել է նոր ժանրի կանոններն ու դրանք հիանալի մարմնավորել իր գործերում:

5 Պատմավեպերի օգտագործումը հայ ժողովրդի պատմության դասավանդման ժամանակ, օգնություն ուսանողին, կազմող՝ Ռ.Ս. Բոզոյան, Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրություն, Խ Աբովյանի անվան աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտ, Երևան, 1979, էջ 3:

Պատմական թեմաներով ստեղծագործող արվեստագետը ինքնանպատակ չի ստեղծագործում, այլ ընդհակառակը նա անցյալի իրականությանը դիմելով փորձում է այդ կերպ արձագանքել իր դարաշրջանի կենսական խնդիրներին մայր ժողովրդի պատմական ճակատագրի առաջադրած հրատապ հարցերին: Այս առումով հեղինակը պատմական անցյալի գեղարվեստական արտացոլմանը մոտենում է իր ժամանակաշրջանի հայեցակետով, ապագայի նկատմամբ վառ հույսեր, հայրենասիրական զգացողություններ արթնացնելու և սերմանելու նպատակով[1]:

Ամենևին պատահական չէ, որ երբ 19-րդ դարի երկրորդ կեսին Իտալիայի միավորման համար պայքար էին մղում Ջ. Գարիբալդին, Կոմս Կավուրը և Ջ. Մաձինին, հանճարեղ Ջիովանիոլին[2] ստեղծեց Սպարտակի կերպարը[3], երբ ուժեղացել էր Օսմանյան կայսրությունում հայ բնակչության նկատմամբ ճնշումները և պարբերաբար կազմակերպվող մասսայական ջարդերը, այնպիսի հայ նշանավոր գրողներ, ինչպիսիք էին Ռաֆֆին[4], Մուրացանը[5], ստեղծեցին՝ Սամվելի[6], Գևորգ Մարզ-

1 Պատմավեպերի օգտագործումը հայ ժողովրդի պատմության դասավանդման ժամանակ.., էջ 4:

2 Ռաֆայել Ջիովանիոլի ծնվել է 1838թ մարտի 13-ին Հռոմում: Նրան ճանաչում է բերել «Սպարտակ» պատմական վեպը, որը նա գրել է 1874թ-ին: Այս ստեղծագործությունը իր հետևից մի պատմավեպերի մեծ շարք է բացում, որոնք նվիրված են Հին Հռոմին: Նա հետևում է ռոմանտիկ ավանդույթներին: Նրա վրա մեծ ազդեցություն են թողել Վոլտեր Սքոթը և Ալեքսանդր Դյումա հայրը: Նա պատկանում է Իտալիայի ազգային-բուրժուական գաղափարներ ունեցող դասականների շարքին, որը հիմնադրվել է Իտալիայի միավորման համար մղվող ազգային ազատագրական շարժումների ժամանակ: Նրա առավել հայտնի ստեղծագործություններն են՝ «Էվելինա», «Պլատոն», «Սատուրն» և այլն: Մահացել է 1915թ հուլիսի 15ին՝ Հռոմում:

3 Սպարտակը (լատ.՝ Spartacus) հռոմեական ստրուկ-գլադիատոր էր, ով Ք.ա. 74-71 թթ. գլխավորեց Ապենինյան թերակղզում հակահռոմեական ապստամբությունը: Նա ծնվել է Թրակիայում, նահատակվել՝ Ք.ա. 71 թվականին Սիլարի գետի մոտ, Ապուլիայում: Իրենց տերերի մոտից փախած ստրուկներից և գլադիատորներից կազմված նրա բանակը մի շարք ճակատամարտերում ջախջախեց հռոմեական լեգեոններին, սակայն ի վերջո պարտություն կրեց: Այդ ապստամբությունը պատմության մեջ մտավ Սպարտակի ապստամբություն անունով: Սպարտակի ապստամբությանը օժանդակություն է ցուցաբերել նաև Մեծ Հայքի թագավարությունը, քանզի Արքայից Արքա Տիգրան Մեծը (մ.թ.ա. 95-55թթ.), որպես և՛ իրատես, և՛ հեռատես ու համարձակ քաղաքագետ ու տաղանդավոր քաղաքական գործիչ, հիանալի հասկանում էր, որ Սպարտակը Հայաստանի համար բնական դաշնակից է հանդիսանում:

4 Ռաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան)ծնել է 1835թ. Սալմաստի գավառի Փայանջուկ գյուղում (Պարսկաստան), հայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ: Նրա կյանքում կարևոր դեր է կատարում «Մշակ» լրագիրը: Խմբագրի հրավերով Ռաֆֆին դառնում է թերթի մշտական աշխատակիցը, այստեղ նա տպագրում է («Գեղեցիկ Վարդիկը», 1872, «Անբախտ Հռիփսիմեն», 1872, «Սով», 1872, «Մի օրավար հող», 1873, «Բիբի Շարաբանի», 1876 և այլն): «Ընտանիքի կերբերոսներ» (1872), «Նամակ Կ. Պոլսից» (1873), «Վաճառականությունը հայերի մեջ» (1872), «Նամակ Պարսկաստանից» (1876) և այլ հրապարակախոսական հոդվածներում Ռաֆֆին արծարծել է տնտեսական, բարոյական, կրթական և այլ բնույթի հարցեր, գեղարվեստորեն պատկերել կյանքի բազմազան ոլորտներ: «Խաչագողի հիշատակարանը» (1869 – 1870թթ., հրտ. 1882 – 1883թթ.) վեպում նա առաջադրում է անհատի քաղաքացիական պարտքի գաղափարը: Արթնացնելով իր հերոսների քաղաքացիական գիտակցությունը՝ Ռաֆֆին նրանց հայացքն ուղղում է դեպի ազգային-ազատագրական պայքարի ասպարեզը: «Զահրումար» (1871, հրտ. 1895), «Ոսկի աքաղաղ» (1870, հրտ. 1882), «Մինն այսպես, մյուսն այնպես» (1890) վեպերում նա պատկերում է առևտրական բուրժուազիայի կենցաղն ու բարքերը: 1888 թ. ապրիլի 25-ին Ռաֆֆին վախճանվում է: Նրա աճյունն ամփոփված է Թիֆլիսում՝ Խոջիվանքի հայկական գերեզմանոցում:

5 Մուրացան (Գրիգոր Տեր–Հովհաննիսյան) ծնվել է 1854թ. դեկտեմբերի 1-ին, Շուշիում, հայ արձակագիր: Նախնական կրթությանն ստացել է մասնավոր դպրոցներում, այնահետև ուսումը շարունակել Շաշիի թեմականում, որն ավարտել է 1873-ին: Գրել «Հասան-Ջալալյան ազգի համստոտ տոհմագրությունը» երկը («Փորձ», 1880, թիվ 5): Մուրացանի երկերը լույս են տեսել ազգային պահպանողական կամ սրան հարող հանդեսներում ու թերթերում՝ «Մեղու Հայաստանի», «Նոր դար», «Արձագանք», «Թատրոն», «Լումա»: Մուրացանի ստեղծագործությունը հայ դասական գրականության ամենաինքնատիպ էջերից է: Ասպարեզ մտնելով հայկական ռոմանտիզմի բուռն վերելքի շրջանում՝ Մուրացանը թեև ականատես եղավ այդ դպրոցի քայքայմանը, սակայն մշտապես հավատարիմ մնաց գեղարվեստական իր վաղ նախասիրություններին և դարձավ հայկական ուշ ռոմանտիզմի ամենախոշոր դեմքը: Մուրացանը մեծ ընդգրկումների արվեստագետ է: Գեղարվեստական ոլորտների մեջ առնելով հայկական իրականության բոլոր բնագավառները՝ նա վավերացրեց մի ամբողջ պատմաշրջան և արձագանքեց ազգային ու սոցիալական իրադարձություններին: Մահացել է 1908թ. օգոստոսի 30-ին: Թաղված է Թիֆլիսում:

6 Պատմավեպի գործողությունը տեղի է ու-

պետունու[1] կերպարները, որոնց միջոցով նրանք փորձեցին երիտասարդությանը պայքարի կոչել ընդդեմ թուրքական հալածանքների:

Պատահական չէ նաև, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Ստալինգրադի ճակատամարտում Նացիստական Գերմանիայի հաղթանակի դեպքում հարևան Թուրքիան սպառնում էր սահմանի մոտ տեղակայված 30 դիվիզիաների Անդրկովկաս ներխուժմամբ, Դերենիկ Դեմիրճյանը[2] 1943թ.ին կերտեց Վարդանանց պատերազմին նվիրված իր պատմավեպը՝ «Վարդանանք»[3]:

ԽՍՀՄ-ի վերջին երեք տասնամյակներում էլ աչքի ընկան շատ ստեղծագործողներ, որոնք անցյալը վերակենդանացնելով ձգտեցին այն ընկալել որպես ներկայի հիմնական պատճառ, պատմական անցյալի մեջ որոնելով իրենց ժողովրդի քաղաքական կեցությանն առնչվող հարցերի պատասխանները: Բրեժնևի իշխանության տարիներին էր, որ Էստոնացի վիպագիր Յաան Կրոսսը[4] ստեղծեց «Յա-

---

նենում IV դարի Հայաստանում, երբ պարսից արքա Շապուհը գերում է Արշակ Բ-ին և Հայաստանը մնում է անպաշտպան: Մերուժան և Վահան Մամիկոնյանը դավաճանում են հայրենիքը և սկսում են ծառայել Շապուհին: Վահան Մամիկոնյանի որդի Սամվելը, իմանալով հոր դավաճանության մասին, որոշում է եղբոր՝ Մուշեղ Մամիկոնյանի հետ պաշտպանել Հայաստանը: Սամվելը սպանում է իր հորը հայրենիքը և կրոնը դավաճանելու համար: Իսկ հայկական եկեղեցում պարսկացած մոր արյունով հանգցնում է վերջին պարսկական կրակը իր հայրենիքում: Առաջին անգամ հրատարակվել է 1886թ.ին Թիֆլիսի Մշակ ամսագրում:

1 «Գևորգ Մարզպետունին» վեպում հեղինակը պատկերում է Հայաստանը 10-րդ դարում՝ արքա Աշոտ Բ Երկաթին, իշխան Գևորգ Մարզպետունուն, հայ-արաբական պատերազմը, երկրի ներսում տիրող իրավիճակը, տարբեր իշխանների ու նախարարների քաղաքականությունը և այլն: Վեպը հիմնված է իրական պատմական փաստերի վրա: «Գևորգ Մարզպետունին» առաջին անգամ հրատարակվել է 1896 թվականին, Թիֆլիսի «Արձագանք» ամսագրում: Գևորգ Մարզպետունի, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1977թ:

2 Դերենիկ Կարապետի Դեմիրճյան (Դեմիրճողլյան) ծնվել է 1877թ փետրվարի 18-ին, Ախալքալաքում (այժմ՝ Վրաստան) հայ գրող, հրապարակախոս: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայոց ծխական դպրոցում: Երկու տարի անց տեղափոխվել է Արդահան, աշակերտել առաջադեմ համոզմունքներ ունեցող Ս. Տեր-Մելիքսեդեկյանին, 1892-ին ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Դեմիրճյանի գրական հայացքների ձևավորման գործում բարերար ազդեցություն է ունեցել ճեմարանի ուսուցիչ, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը: 1898-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա աշխատել Արդահանում: 1900-ին հաստատվել է Թիֆլիսում, մասնակցել Հ.Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծված Վերնատուն գրական ընկերության աշխատանքներին: Երաժշտություն ուսումնասիրելու նպատակով 1903-ին մեկնել է Մոսկվա: 1905-10 թվականներին սովորել է Ժնևի համալսարանի մանկավարժական ֆակուլտետում, վերադարձել Թիֆլիս և զբաղվել ուսուցչությամբ: 1925-ին տեղափոխվել է Երևան, եղել գիտության և արվեստի ինստիտուտի արվեստի բաժնի գիտքարտուղարը: Նրա ստեղծագործություններն են՝«Կյանքի տեսիլ» պոեմը 1913թ., «Լենկթեմուր» հայրենասիրական պոեմը, «Սեփականություն», «Տերտերը», «Ավելորդը», «Ստամոքս», «Քաջ Նազար» կատակերգությունը և այլն: Մահացել է 1956թ. դեկտեմբերի 6-ին, թաղված է Երևանում:

3 «Վարդանանք», հայ անվանի գրող Դերենիկ Դեմիրճյանի պատմավեպ: Հայ գրականության նշանավոր ստեղծագործություններից է: Այն գրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝1943թ-ին, որպեսզի բարձրացնի ռազմաճակատում գտնվող հայ զինվորների մարտական ոգին: Հեղինակը գրքում ներկայացնում է Հայաստանը 5-րդ դարում, հիմնականում պատմելով 451 թվականին Հայաստանում տեղի ունեցած դեպքերի մասին, երբ հայ ժողովուրդը սպարապետ Վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ ապստամբեց և Ավարայրի դաշտում հերոսաբար կռվեց պարսիկների դեմ, որոնք, տիրելով Հայաստանին, հայ ժողովրդին ուզում էին պարտադրել իրենց հավատը: Վարդանանք (պատմավեպ), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968թ:

4 Յաան Կրոս, (էստ.՝ Jaan Kross, փետրվարի 19, 1920, Տալլին, Էստոնիա - դեկտեմբերի 27, 2007, Տալլին, Էստոնիա), էստոնացի գրող: Յաան Կրոսը 1945 թվականին ավարտել է Տարտուի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1944 թվականին նա ձերբակալվել է գերմանացիների կողմից: Կես տարի անց ազատվել է, իսկ 1946 թվականի հունվարի 5-ին ձերբակալվել է խորհրդային իշխանությունների հրամանով, հետագա մի քանի տարին անցկացրել է Ռուսաստանի բանտերում: Էստոնիա է վերադարձել 1954 թվականին և այդ ժամանակից էլ սկսել է լրջորեն զբաղվել գրականությամբ: 1940-1949 թթ. ամուսնացած է եղել Հելգա Պեդուսաարի, 1954-1958 թթ.՝ Հելգա Ռոոսի հետ: 1955 թվականին ծնվել է Յաան Կրոսի ու Հոլգա Ռոոսի դուստրը, որ հետագայում վերցրել է Ռոսս ազգանունը: Վերջինս դարձել է հայտնի լեզվաբան: 1958 թ. ամուսնացել է դանիացի բանաստեղծուհի և գրող Էլլեն Նիյտի հետ: Նրանք ունեցել են երեք երեխա՝ Մաարյա (ծնվ. 1959 թ.), Էերիկ-Նիյլես (ծնվ. 1967 թ., ազգային անվտանգության հարցերով խորհրդատու, անհատ ձեռներեց, հրատարակիչ), Մյարտեն (ծնվ. 1970 թ., անշարժ գույքի զարգացման մասնագետ, կիոպրոդյուսեր, լուսանկարիչ): Յաան Կրոսին մեծ ճանաչում են բերել պատմական

րի Խելագարը[1]» ստեղծագործությունը, որտեղ Տիմոտեուս Ֆոն Բոկը, որը բանտարկվել էր իր ազատական հայացքների համար, խորհրդանշեց Բրեժնևյան քաղաքական հաշվեհարդարի ձևը (նրանք ովքեր դեմ էին կամ չէին համապատասխանում Խորհրդային կարգերից բխող գաղափարաբանության սկզբունքներին որպես խելագար նետվում էին հոգեբուժարան):

1964թ.ին Ստեփան Զորյանը լույս է ընծայում իր «Հայոց Բերդը», իսկ 1967թ.ին լույս է տեսնում նրա «Վարազդատ» վեպը և ինչպես նշում է պրոֆեսոր Ռ. Միրզախանյանը. «հեղինակը բարդ խնդիր էր դրել իր առջև՝ խորանալ Հայոց Պատմության բարդ և հակասական մի ժամանակահատվածի պատմական իրադարձությունների մեջ, ճիշտ ընկալել դրանք և ներկայացնել գեղարվեստորեն»[2]:

Այս և այլ բազմաթիվ պատմավեպերի հեղինակներ շատ դեպքերում ունենալով իրենց նախընտրած հերոսի մասին շատ փոքրիկ պատմական փաստագրական նյութ, կարողացել են կերտել մի հարուստ պատմություն, օգտագործելով ինքնատիպ գեղարվեստական հնարքներ: Անցյալի հերոսները նախատեսված էին, ինչպես ազգային ինքնագիտակցությունն արթնացնելու, այնպես էլ հայրենասիրական ազդակներ հանդիսանալու մատաղ սերնդի համար:

Այս առումով է, որ պատմության դասավանդման ընթացքում մեծ կարևորություն է ներկայացնում պատմավեպերի օգտագործումը: Թեև պատմավեպերում պատմական որոշ փաստեր և երբեմն նույնիսկ երևույթներ ներկայացվում են աղավաղված, այնուամենայնիվ դրանք կարևոր են, ոչ միայն հայրենասիրական դաստիարիարակության, այլ նաև աշակերտների կողմից պատմական այս կամ այն ժամանակաշրջանի ոգու, կարգերի, կենցաղին ծանոթ դարձնելու և նրա մեջ վառ պատկերացումներ կազմելու գործընթացի տեսանկյունից:

Հ. Պապոյանը նշում է, որ մինչև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները, ինչպես Եվրոպայի և Արևմուտքի, այնպես էլ Ռուսաստանի դպրոցներում ընդունված էր սովորողների կողմից ընթերցանության ժամանակ ուշադրություն դարձնել պատմության բովանդակությանը[3]:

Թեև Ամերիկայում, Եվրոպայում դեռևս 19-րդ դարի վերջին հրատարակված մանկավարժա-մեթոդական գրականության

թեմաներով վեպերն ու նովելները, որոնց հերոսները Էստոնիայի հետ կապված մարդիկ են: «Կայսերական խենթը» ստեղծագործության հերոս Տիմոֆեյ ֆոն Բոկը բանտարկված է նախ Շլիսսելբուրգում, ապա՝ Պետրոպավլովյան ամրոցում: Կյանքի վերջին տարիներին նրան համարում են խելագար Ալեքսանդր I կայսերը գրած նամակի պատճառով, որտեղ նա խստորեն քննադատում էր կայսեր քաղաքականությունը:

Յանսենը թերթ է հրատարակում՝ դրանով սկիզբ դնելով էստոնական իրականության մեջ պարբերականների հրատարակման գործին: Սակայն նա միաժամանակ ընդունում է գերմանացիների գաղտնի հովանավորությունը՝ թերթում տպագրելով նրանց օգտակար նյութեր: Յանսենի տղան երիտասարդ հասակում խիստ քննադատության է ենթարկում հոր արարքը, սակայն տարեց հասակում ընդհակառակը, պաշտպանում է հորը («Մեկ ժամ աթոռի վրա, որը պտտվում է»)

Յաան Կրոսի էստոնացի ամենահայտնի ու ամենասիրված գրողներից է: Նրա գործերը թարգմանվել են ռուսերեն, շվեդերեն, գերմաներեն, ֆիններեն և այլ լեզուներով:

Յաան Կրոսն էստոներեն է թարգմանել Հայնրիխ Հայնեի, Յոհաննես Բրեխտի, Ֆրիդրիխ Շիլլերի, Ալեքսանդր Գրիբոյեդովի ստեղծագործություններից:

1 Ցարի Խելագարը պատմավեպը էստոնական մի ազնվականի մասին է, որը ամուսնանում է գյուղացի մի աղջկա հետ: Տիմոթեուս ֆոն Բոկը լինելով ցարի մերձավոր շրջապատից մի օր որոշում է ազատական գաղափարները նամակով ուղարկել ցարին, որում խիստ քննադատության է արժանացնում ցարի վարած քաղաքականությունը: Վեպում պատմողի դերը պատմկանում է Ֆոն Բոկի աներորդուն, որը շարունակ գրի է առնում իրր օրագրում Բոկի կյանքը և գործը:

«The Czar's Madman», (Estonian: Keisri hull) is a 1978 novel by Estonian writer Jaan Kross. Publisher «Eesti Raamat», Publication date 1978, published in English 1992.

2 Ռ. Միրզախանյան, Խորհրդային մշակույթը 1956-1990թթ., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., Երևան, 2009, էջ 75-76:

3 Պապոյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, /դասախոսությունների նյութեր/, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, "Տիր" հրատ., Երևան, 2013, էջ 185:

մեջ հանդիպում ենք, ոչ միայն պատմավեպերի, այլ նաև պատմական թեմաներով գեղարվեստական այլ ժանրերի ստեղծագործությունների կիրառման, ինչպես օրինակներ, այնպես էլ ընդարձակ գրականության ցանկեր: Այնուամենայնիվ չի կարելի ենթադրել, որ մինչև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները, պատմության դասապրոցեսի կամ դրանից դուրս (տնային հանձնարարությունների միջոցով) պատմավեպերի, կիրառումը կրել է լայն բնույթ:

Սակայն մի բան հստակ է, որ դեռևս 19-րդ դարի վերջից շատ ու շատ մանկավարժներ կարևորել են երեխայի մեջ բարոյական, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակության տեսանկյունից պատմավեպերի և դրանցում առկա հերոսական վառ կերպարների անհրաժեշտությունը, նրանց օրինակի միջոցով՝ անձ ձևավորելու առավելությունները:

Այսպես Գ. Քոմփեյրը 1887թ.ին իր հրատարակած Տեսական և գործնական մանկավարժություն լեկցիոն նյութերի ժողովածուում գրում է գիտելիքի և օժտվածության հետ համեմատած բարոյական շքեղության գերազանցության (The superiority of moral grandeur) առավել կարևոր լինելու մասին: Մասնավորապես հեղինակը նշում է, որ երբեմն պատահում է, որ բարոյականությունը չի զուգորդում սովորելուն, ավելին նույնիսկ հանձարեղին ("It sometimes happens, however, that morality does not accompany learning, nor even genius")[1]: Այնուհետև Քոմփեյրը ցիտելով Բլեքիի խոսքերը նշում է, որ որպես բարոյական մարդ առաջին Նապոլեոնը ապրել և մահացել է շատ աղքատ և շատ փոքր... և որ Լորդ Բայրոնի[2] համար հեշտ էր լինել մեծ պոետ դա նրա տեսակն էր ի բնե, նա արծիվ էր և պետք է թռչեր և կարող էր հանգիստ և հումորով արտահայտել իր դժգոհությունը, չէր էլ փորձել նույնիսկ լինել պատճառաբանված էություն (reasonable being) և ջենտլմեն, դա բարդ երևույթ էր: Այդ իսկ պատճառով էլ նրա կյանքը պատահականություններով լեցուն լինելով, ընդհանուր առմամբ սարսափելի ձախողված էր: Ապա Քոմփեյրը բերում է նաև լուսավորիչ Ռուսսոյի[3] օրինակը, ով լինելով տաղանդավոր, միաժամանակ քաջությունների ընդունակ, սակայն չէր կարողանում հարմարվել տարրական կյանքի համար անհրաժեշտ պարտականություններին և ընդհանուր առմամբ չի կարելի ասել, որ ազնվությամբ փայլում էր[4]: ("As a moral man," syas Mr. Blackie, "the first Napoleon lived and died very poor and very small... It was an easy thing for Lord Byron to be a great poet; it was merely indulging his nature; he was an eagle, and must fly; but to have curved his wilful humor, soothed his fretful discontent,

1 Compayre Gabriel, Lectures on pedagogy, theoretical and practical, "D.C. Heath & Co.," Boston, 1887, p. 206.

2 Ջորջ Բայրոն ծնվել է 1788թ հունվարի 22-ին: 19-րդ դարի անգլիացի բանաստեղծ, ռոմանտիզմի ամենաերևելի ներկայացուցիչներից մեկը, Եվրոպայի մեծագույն գրողներից մեկը: Նրա ամենաճանաչված աշխատանքների թվում է որոշ ինքնակենսագրական տարրեր պարունակող սկանդալային Դոն Ժուան պոեմը:Բայրոնն առաջին հայագետներից է. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան Միաբանության վանականներից նա սովորել էր հայերեն, նրա օգնությամբ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն են թարգմանվել մի շարք կրոնական և աշխարհիկ ձեռագրեր, ստեղծվել է անգլերեն-հայերեն բառարան: Ստեղծագործություններն են՝ 1807 - «Պարապության ժամեր», 1815թ.ին «Հրեական մեղեդիներ», 1816թ.ին Շիլիոնի կալանավորը, 1816թ.ին «Պրոմեթևս» և այլն: Մահացել է 1824թ ապրիլի 19-ին:

3 Ռուսո Ժան Ժակ (ֆրանսերեն՝ Jean-Jacques Rousseau 1712թ. հունիսի 28, Ժնև – 1778թ. հուլիսի 2, Էրմենոնվիլ, Փարիզի մոտ), Լուսավորության դարաշրջանի նշանավոր ֆրանսիացի փիլիսոփա և գրող: Նրա հասարակական և քաղաքա-իրավական հայացքները շարադրված են «Դատողություններ. նպաստել է արդյոք գիտությունների և արվեստների վերածնունդը բարքերը մաքրելու վրա» (1750), «Դատողություններ մարդկանց միջև անհավասարության ծագման և հիմքերի մասին» (1754), «Քաղաքական տնտեսման մասին» (1755), «Դատողություններ հավերժական աշխարհի մասին» (առաջին անգամ հրատարակվել է մահվանից հետո, 1782 թվականին), «Հասարակական պայմանագրի մասին, կամ քաղաքական իրավունքի սկզբունքները» (1762) և այլ երկերում: Ռուսոն նաև երաժշտագետ, երգահան և բուսաբան էր:

4 Compayre Gabriel, Lectures on pedagogy.., p. 206.

and learned to behave like a reasonable being and a gentleman, – that was a difficult matter, which he does not seem ever seriously to have attempted. His life therefore, with all his genius and fits of occasional sublimity, was on the whole a terrible failure." The same might be said of Rousseau, capable on occasion of heroic devotion, but powerless to apply himself to the ordinary duties of life; a man of incomparable genius, but scarcely an honorable man).

Քոմփեյրն այստեղ նշում է ապա եկեք բարոյականությունը դնենք առաջին տեղում ծրագրերի և խնդիրների մեջ, քանի որ դա առաջնային անհրաժեշտություն է ներկայացնում հասարակության համար[1]: (Then let us put morality in the first rank of our solicitudes, because it is the first need of society).

Այսպիսով անկախ պատմավեպերում առկա փաստերի այս կամ այն չափ աղավաղված լինելուց, եթե վերցնենք անձի դաստիարակությունն առաջնահերթ հանդիսացող խնդիր, միանշանակ պարզ է, որ առավել մատչելի և դաստիարակող բնույթ է կրում հենց գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով ավագ դպրոցականներին պատմության առավել վառ օրինակներ (կերպարներ) կյանքի և իրադարձությունների, պատմական այս կամ այն ժամանակաշրջանի մասին պատկերացումներ տալու գործընթացը:

Մեթոդիստ Յարվիս Չարլզ Հուպերն այս առումով, դեռևս 1917թ.ին իր լույս ընծայած Պատմության ուսուցումը գրքում նկատել է, որ եթե երեխան վառ կերպով պատկերացնում է նկարագրվող տեսարանները, ապա կարելի է վստահ լինել, որ նա իր զգացմունքներով անհաղորդ չի մնա պատմության կերպարներին[2]: (If the child vividly imagines the scenes described we may be certain that he will not remain indifferent in feeling towards the characters of the story)

Ուսուցչի կամ սովորողների կողմից պատմավեպերի նույնիսկ հատվածների ընթերցումը սովորողներին տեղափոխում է պատմական իրավիճակ, կամ վերստեղծում դարաշրջանի առանձնահատկություններն ու յուրահատկությունները և ներկայացնում այդ իրադարձության կերպարային նկարագրությունը:

Սովորողի մեջ հետաքրքրություններ են առաջանում պատմավեպերի հանդեպ, որտեղ նա գտնում է հետաքրքիր գեղարվեստականորեն ներկայացված պատմություններ, որն էլ հենց խթան է հանդիսանում պատմության հանդեպ մեծացնելով հետաքրքրությունը:

Քոմփեյրը առաջարկում է պատմության ուսուցումը սկսել, որքան հնարավոր է խուսափելով չոր փաստագրական և խրթին ակադեմիական տեքստերից, փոխարենը հաշվի առնելով փոքրիկ ուսումնասիրողների տարիքային առանձնահատկություններն ու դրանից բխող հետաքրքրությունների շրջանակը հիմքը դնել փաստագրական քիչ նյութ պարունակող, բայց միևնույն ժամանակ հարուստ նկարագրական նյութ ունեցող պատմությունների վրա, որոնք երեխայի հետաքրքրությունները շարժելով նրանց կտան մեծ և վաստակաշատ մարդկանց կերպարներ, վարվելակերպի կանոններ, գեղեցիկ օրինակներ և այն ամենը ինչ կարող է խորհրդանշել այս կամ այն ժամանակաշրջանը[3]: (He will find in them the great portraits of men, sketches of manners, beautiful examples, everything which characterises the different epochs).

Դպրոցի աշակերտը հերոսների երկրպագողն է և անխուսափելիորեն աշակերտի զգացմունքայինությունն աճում է հերոսի կատարած սխրանքներով, որոնք այնքան իրական են դառնում դեռահասի երևակայությամբ[4]: (The young boy is a hero-worshipper and inevitably has his emotions aroused by the deeds of the heroes

1 The same, p. 206.

2 Charles H. Jarvis, The teaching of history, Clarendon press, Oxford, 1917, p. 55.

3 Compayre Gabriel, the same, p. 358.

4 Charles H. Jarvis, The teaching of history.., p. 55.

which his imagination makes so real to him)

Ինչ վերաբերում է խորհրդային դպրոցական պատմական կրթությանը ապա հարկ է նշել, որ որոշ մեթոդիստներ հիմնականում շեշտը դնում էին իլյուստրատիվ մեթոդների կիրառման վրա, իսկ գեղարվեստական գրականությանն այդ թվում և պատմավեպերին այդքան էլ լայն տեղ չէր հատկացվում, ինչպես բուն դասապրոցեսի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության տեսանկյունից:

Այսպես օրինակ վաստակաշատ մեթոդիստ Կորովկինի խմբագրությամբ լույս տեսած պատմության դասավանդման մեթոդիկայի ուսումնական ձեռնարկում, նշվում է, որ անցյալը վերակենդանացնող գրականության ստեղծագործությունների ընտրությանը պետք է զգուշորեն վերաբերվել, քանի որ նրանում առկա է հորինվածք[1]:

1982թ.ին լույս տեսած հին աշխարհի պատմության 5-րդ դասարանի համար նախատեսված դասագրքի բովանդակությունից երևում է, որ հատկապես կարևորությունը տրվում էր քարտեզների, սխեմաների, նկարների, ճակատամարտերի սխեմաների և այլ իլյուստրատիվ միջոցների կիրառմանը, որոնք անշուշտ ևս սովորողների մոտ հետաքրքրություններ և լրացուցիչ գիտելիքներ սերմանելու միջոց են[2]: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ խորհրդային հեղինակները նախապատվությունը տալիս են դասապրոցեսի ընթացքում ուսուցչի կողմից ստեղծագործությունների հատուկ ընտրված հատվածների ընթերցանությանը:

Հարկ է նշել, որ գիտելիքակենտրոն ուսուցման սկզբունքներից ելնելով էր, որ հատկապես կարևորություն էր տրվում իլյուստրատիվ միջոցների կիրառմանը (իլյուստրատիվ միջոցը մեր խորին համոզմամբ ևս, մեծ նշանակություն ունի սովորողների մոտ այս կամ այն ժամանակաշրջանի մասին պատկերացումների ձևավորման տեսանկյունից- Ա.Մ.):

Բացի այդ պետք է հաշվի առնել, որ մեր օրերում դասագրքերի շատ հաճախ հանդիպող մատչելիության ցածր մակարդակի պայմաններում, էլ ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում գեղարվեստական շարադրանքով հագեցած պատմավեպերի ընթերցանության նշանակությունը: Մասնավորապես այսօրվա պատմագիտական առաջընթացի և ասպարեզում նորանոր գիտական բացահայտումների պայմաններում դասագրքերում առկա դասանյութերը դարձել են ավելի տարողունակ, փաստագրական նյութերով ծանրաբեռնված, երբեմն նաև խրթին շարադրանքով և ուսուցչի բեռը կարելի թոթափել ինչպես նրա կողմից գեղարվեստական շարադրանքի մեթոդի կիրառմամբ, այնպես էլ գեղարվեստական գրականության և հատկապես պատմավեպերի լայնորեն կիրառմամբ:

Դասագրքերում առկա ակադեմիական տեքստի բարդությունների մասին Ստեպանիշևը գրում է, որ ցավոք աշակերտները պատմության հետ ծանոթանում են ակադեմիական չոր լեզվով գրված դասագրքերի միջոցով և բերելով այդպիսի տեքստերի օրինակներ ռուսաց պատմության (միջնադարի և նոր շրջանի) դպրոցական դասագրքերից նշում է, որ որոշ պարբերություններով 13-14 տարեկան դպրոցականին առաջարկվում է միագամից մտապահել ութ թվական փաստ, ինչպես նաև յոթ վանական համալիրների, երեք եկեղեցիների և քաղաքների անուններ: Այդ իսկ պատճառով էլ Ստեպանիշևը շեշտադրում է, որ ուսուցիչը չպետք է հույսը դնի միայն դասագրքի վրա և որ պետք է միշտ հիշի, որ պատմական նյութի գեղարվեստական զարդարանքը համարվում է սովորողների կողմից նյութի հաջող ընկալման կարևոր պայմաններից մեկը[3]:

1 Методика обучения истории в средней школе, пособие для учителей в двух частях, часть первая, отв. ред. Коровкин Ф. П., “Просвещение”, 1978, с. 115.

2 Коровкин Ф.П., История древнего мира, учебник для 5 класса, утвержден Министерством просвещения СССР, “Просвещение”, Москва, 1982.

3 Степанищев А.Т., История отечества:

Այս առումով լրացուցիչ ընթերցանության համար այս կամ այն ժամանակաշրջանի վերաբերող պատմավեպերի ընթերցումը առավել հասկանալի է դարձնում դասագրքի ակադեմիական տեքստի բարդ շարադրանքի ետևում թաքնված փաստերի ընկալումը ավագ դպրոցի աշակերտների համար: Ինչպես նշում է Հ. Ղևոնդյանը, գեղարվեստական գրականությունը պատմության ուսուցումը դարձնում է առավել նպատակասլաց, պատկերավոր, կենդանի և հուզական[1]:

Ինչպես տեսանք, պատմավեպերի կիրառումը դպրոցներում, որպես պատմական կրթության բաղկացուցիչ, արդեն երկու դարից ավելի պատմություն ունի, որը պայմանավորված է, ինչպես դաստիարակչական տեսանկյունից անձի ձևավորման գործընթացում արժեքային համակարգի կազմավորման, այնպես էլ մեթոդական առումով՝ դասանյութերում ներկայացվող ժամանակաշրջանն առավել պատկերավոր, նրան առանձնահատուկ երևույթներն ընկալելի դարձնելու, այս կամ այն աշխարահագրական վայրերի գեղարվեստական նկարագրության տեսանկյուններից:

Մեր կարծիքով պատմավեպերի, որպես արտասարանական ընթերցանության հանձնարարումը խթանում է նաև աշակերտի հետաքրքրությունները նրան մղելով ինքնակրթության, ինքնադաստիարակության:

Ավելին պարզ է, որ աշակերտն ավելի շատ գիտելիք է ձեռք բերում ինքնուրույն կատարած աշխատանքից, որը բխում է իր հետաքրքրություններից, ուստի ուսուցիչը պետք է կարողություն ունենա աշակերտին ուղորդելու դպրոցական գրադարաններից անհրաժեշտ գրականության ձեռք բերման գործում[2]: (The teacher must be capable of guiding him (pupil, A.M.) in his pursuit of knowledge in the school libraries)

Ինչպես նշեցինք պատմավեպերը անձի դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն աշակերտի մոտ հայրենասիրական զգացմունքներ առաջացնելու, նրա մոտ բարոյական արժեքների ձևավորման համար:

Պատմության դասավանդման ընթացքում արժեքային համակարգի ձևավորման խնդիրների մասին խոսելիս Վյազեմսկին և Ստրելովան իրավացիորեն նշում են, որ երկարաժամկետ հեռանկարում արժեքների և հայացքների համակարգը կյանքի վրա ավելի խորը ազդեցություն է թողնում, քան սուբյեկտիվ գիտելիքներն ու հմտություններն, այդ պատճառով էլ պետք է գիտակցված ու վճռականորեն սերմանել հենց այդ հասկացությունը հայեցակարգի շրջանակներում և պատմության ուսումնասիրության կազմակերպման մեջ:

Այսօրվա գիտական, տեխնիկա-տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում գիտելիքները դարձել են, ոչ միայն առավել բազմազան, այլ նաև առավել մատչելի՝ ձեռքբերման տեսանկյունից, մասնավորապես համացանցի հասանելիությունը աշխարհի ցանկացած անկյունում (թերևս բացառություն է Հյուսիսային Կորեան, որտեղ գործում է ներքին համացանց հյուսիս-կորեացիների և արտաքին՝ մուտք գործելու հնարավորություն տուրիստների համար, ընդ որում երկու ցանցերի միջև կապ չի գործում), հնարավորություն է տալիս ցանկացած փաստի և իրադարձության մասին, ինչպես ինֆորմացիայի հսկայական աղբյուրներ, այնպես էլ հանրագիտարանային տեղեկատվություն ձեռք բերել համակարգչի որոնողական համակարգերի միջոցով: Այսօր մեր նպատակը պետք է լինի, ոչ թե չոր պատմական փաստերի կուտակումը աշակերտների մոտ, որը նրանք հետագայում չօգտագործելով՝ մասամբ

преподование в школе, учебное пособие, “Гардарики”, Москва, 2001, с. 53-55.

1 Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, "Մանկավարժ", Երևան, 2001, էջ 112:

2 National Council of Education, Observations on the teaching of history and civics in primary and secondary schools of Canada, Office of the General Secretary: 11 Kennedy street, Winnipeg, published before 1923, p.16.

կամ ոչ մասամբ մոռանում են, այլ պետք է հիմնական շեշտը դրվի մատուցվող գիտելիքի դաստիարակչական ֆունկցիայի վրա: Այս առումով ավագ դպրոցում կարևորագույն նշանակություն է ձեռք բերում ուսուցչի կողմից նյութը մատուցելիս գեղարվեստական խոսքի, գեղարվեստական գրականության և հատկապես պատմավեպերի կիրառումը, ինչպես բուն դասապրոցեսի ընթացքում (հատվածների ընթերցանություն), այնպես էլ արտադասարանական հանձնարարության միջոցով:

THE USAGE OF HISTORICAL NOVELS AS A MEANS OF PATRIOTIC UPBRINGING IN HIGH SCHOOLS, DURING TEACHING HISTORY

Researcher of the Chair of World History and its Teaching Methodology, Faculty of History and Jurisprudence, ASPU

The article considers the problems of patriotic upbringing of the learners by means of using historical novels in the teaching process of history. The methodology concerns both curricular and extra-curricular reading. The author tries to prove the necessity of including historical novels in high school syllabus in order to develop individuals' value system. The usage of historical novels will help the students to imagine the spirit of the era facilitating further perception of the teaching material.

ИСПОЛЬЗОВАНИЕ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ В СТАРШЕЙ ШКОЛЕ ИСТОРИЧЕСКОГО РОМАНА КАК СПОСОБА ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ

АРШАК МЕЛКОНЯН

Факультет истории и правоведения АГПУ им. Хачатура Абовяна
Аспирант кафедры Всемирной истории и методики ее преподавания

В статье обсуждаются вопросы формирования патриотических чувств у учащихся старшей школы на основе изучения исторических романов как на уроках истории, так и в процессе внеаудиторного чтения. Нами предпринята попытка рассмотрения необходимости изучения исторических романов с точки зрения способов реализации формирования в ценностной системе личности такого важного чувства как патриотизм. В работе обсуждаются вопросы актуальности использования исторических романов как непосредственно в течение урока, так и в процессе внеаудиторного чтения, что поможет учащимся ярче представить дух времени и сделает учебный материал более доступным, а также будет способствовать его пониманию и усвоению.

1 Вяземский Е.Е., Стрелова О.Ю., Методика преподавания истории в школе, практическое пособие для учителей, "Владос", Москва, 2001, с. 24.